



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՎՈՐ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՆԱՆԱԳՅՈՒԼԻ ՅԵՎ ԿՈՎԻ ԿՈՒՎԸ  
ՅԵՎ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԻ ԶՐՈՒՅՑԸ  
ԿՈՎԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՄԱՍԻՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՎՈՐ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ - 1929



ԳԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍՎԱՐ. ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

636.2.083

**ՆԱՆԱԳՅՈՒԼԻ ՅԵՎ ԿՈՎԻ ԿՐԻՎԸ  
ՅԵՎ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԻ ԶՐՈՒՅՑՑ  
ԿՈՎԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՄԱՍԻՆ**

**Կազմեց ի. կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**



**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԳՅՈՒՅՑՈՒՆ**

**ԵՎՐԵՎԱՆ - 1929**

Հրատ. № 1139

ԹԵՏՐԱԿԻ ՑԵՐԿՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

ԴՐԱՆԵՐԱՅԻ. № 2882(Р)

Գաղափ. № 1281

Տիպ. 5000

## ՊԱՐԱՎ ՆԱՆԱԳՅՈՒԼԻ ՅԵՎ ԿՈՎԻ ԿՐԻՎԸ

### I

Զմեռվա կեսին, մի ցուրտ որ առավոտյան  
ժամը վեցին, պառավ նանագյուլը կաթնամանը  
ձեռին մոտեցավ բակու և կանգնած, քիթ-մոռւ-  
թը կախ, լղարած, վոսկը մնացած իր կովին  
կթելու. հենց վոր պազեց, ամանը կրծքի տակն  
առավ, ծծերից բռնեց, կովը վոտը բարձրացրեց,  
սկսեց աքացիներ տալ, քիչ մնաց ամանը կոտ-  
րեր. պառավը չարացած վեր կացավ, բայց ու-  
ղեց նրա խաթը առնել. սկսեց նրա զլուխը  
սղալել ու ասել.

— Մարալ ջան, դինջ կաց, երեխեքը քաղ-  
ցած են, ուտելու բան չկա, թող, վոր կթեմ:

— Բա յես քաղցած չեմ, — պատասխանեց  
կովը, վոտը գետնին խփելով. ի՞նչ ես տվել,  
վոր յես քեզ տամ, տանես երեխանցդ տաս ու-  
տելու:

— Կույ քոռանամ յես, տես ի՞նչ ա ասում.  
բա ամեն որ քեզ դարման չեմ տալի՞ս:

— Հա, մի բուռը չոր դարման. ուզում ես,

վոր գրանով համ յես կշտանամ, համ քեզ կաթ տամ, համ ել քորփա հորթուկիս կշտացնեմ, վոր ծծերս կրծում ա հա կրծում, համա բերանը բան չի ընկնում:

— Բաս լավ, ի՞նչ անեմ, վոր դու համ ինձ կաթ տաս, համ ել քո հորթուկին, ել բաենց քացի քացի չանես:

— Ի՞նչ անես խի՞ չես դու լել ուրիշների նման որական միքանի ֆունտ չոր խոտ գցում իմ առաջ, են քո բոստանից հավաքած բազուկից, կարտոֆիլից, գազարից ինձ ել բաժին հանում, վոր քեզ շատ կաթ տամ:

— Ի՞նչ ես սարսաղ-սարսաղ դուս տալիս, խի՞, կովը բազուկ, գազար կուտի՞ չե, եղ եր մնացել, վոր քո ըռեխը ածելի:

— Չես ածի, կաթ չեմ տալ:

— Կտաս, կտաս, Մարտի ջան, բա յես շեզ պահել մեծացը ել եմ, ինչի՞ յես իմ ամազը մոռանում:

Այս ասելով Նանագյուլը ելի մոտեցավ, վոր պպղի, ծծերից բռնի, կովը ավելի չարացավ.

— Ապառավ, հեռացիր, թե չե քացի կտամ, բերնումդ մնացած երկու ջուխտ մի կենտ ատամներդ ել կփշրեմ. քեզ ասում եմ կրծքումս կաթ չկա:

— Բա կաթդ վմբանեղ ա կորեր ում ես տվել.

ամառը ենքան կաթ իր տալի, հիմի ես ձմեռ  
գժվել ես, կաթ չես տալիս:

— Խի՞յեմ գժվել, ամառը հանդում չոր խոտ  
կար, ելի ուտում, կշտանում ի, կաթ տալի,  
հիմի ի՞նչ ես տալի, վոր քեզ ի՞նչ տամ:

— Աղջի չերիքնազ, — Նանագյուլը դարձավ  
հարևանին. — Ես մեր կովը եսոր գժվել ա, չի  
թողնում, վոր կթեմ. հենց ապրես, մի քոմակ  
արա, սրան կթեմ. երեխեքը քաղցած են, միքիչ  
ել մածուն մերեմ:

— Ա քավթառ, կաթ չունեմ, հեռացիր,  
մինչև ինձ չկշտացնես, կաթ չեմ տալ, լավ ի-  
մացիր:

— Աղջի, տեսնում ես՝ վոնց ա ղղմիշ ե-  
լել ես անիծածը. բա սրան չաժի մի լավ քո-  
թակ տամ:

— Զե, Նանագյուլ ջան, քոթակով բան չի  
դառնալ, ելի սիլի-բիլի արա, ճակատը, մեջքը  
քորի, առաջն ել ուտելու մի բան դցի:

— Ախր ի՞նչ դցեմ, միքիչ դարման ունեմ,  
են ել պրծնելու վրա յս. սաղ որը վեր ա ընկ-  
նում, ատամները վրաս ղընդղճացնում, կասես  
յես իրա դուշմանը ըլեմ:

— Բաս իմ դուշմանը չես, ի՞նչ դահրումար  
ես. սոված փորս վեց-վեց ա անըմ, սաղ որը  
քաղցած զկոտում եմ, հորթուկս ենքան դատարկ

ծծերս լմլմում ա, վոր յարա յեն դառել, սովածութեն ա ազիդ բալես եգուց-ելոր վոր մահանա, դրա ջուղաբը ով պիտի տա:

— Աղջի Հերիքնազ, ես գիֆը տես ինչեր ա ասում:

— Գիֆը հենց դու յես, քավթառ, սաղ տարին թրքի մեջ ես պահում, մի անդամ չես լողացնում, մեջքիս, փորիս դաշե, չոթկ չի դիպչում, ճանճերը, տիզերը, վոջիլները հանգըստություն չեն տալի. առաջներում ելի ձիու վոտի տակ տրորած, բորբոսնած խոտն իր իմ առաջ զցում, են ել կարացրիր, հիմի մի երկուբուռ դարմանի կրծոնք ես ախոռը զցում, ստիպում, վոր կաթ տամ. աչքս վրա մնաց՝ մի որ ինձ գագար, բազուկ կամ կարտոֆիլ ուտացնես. հավաքել ես վուսերը լցրել, հոտացնում, խնայում ես միքիչ ել ինձ տաս:

— Վայ, իմ աչքս քոռանա, աղջի Հերիքնազ, եղ ի՞նչ ակուրկուտ անըմ, խի, տավարը զաղար, բազուկ, կարտոլ կուտի:

— Դե բալքի սիրտն ուղում ա, տուր ուտի, ելի:

— Գիֆ ես, ինչ ա, ուտի, փորը ուռչի, սատկի, բա իմ երեխեքը կաթի հասրաթ մնան:

— Թե վոր տաս, հասրաթ չեն մնալ, քեզ ենպես կաթ կտամ, վոր երեսին մի մատ դալմաղ կրոնի:

— Հերիքնազ, խելքդ եղ գազար-բազուկից  
ի՞նչ ա կտրում:

— Դե յես ի՞նչ գիդամ. ասում են՝ եսոր  
մեր գեղը մի մածնազետ ե եկել, նանազյուլ,  
տավար պահելու համար զրից պետք ա անի.  
Պնանք նրանից խորհուրդ հս ըցնենք:

— Գնանք, գնանք, Հերիքնազ:

— Զեղ բարի ճանապարհ, գնացե՞ք,—ասաց  
կովս ու տեղնուտեղը պառկեց մռութը կախ:

## II

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԻ ՃՐՈՒՅՅԸ

Ընկերներ, շատ ուրախ եմ, վոր հավաքվել,  
հետաքրքրվում եք, թե ի՞նչպես պետք ե կովին  
կերակրել ու պահպանել, վոր շատ կաթ տա.  
պառավ նանազյուլն ել դեռևս այստեղ չմտած,  
փեշս բռնեց, գանգատվում եր, վոր իր կովը  
զզմիշ ա ելել, կաթ չի տալիս, իրենից գազար,  
բազուկ ե պահանջում. ի՞նչ ճար անել:

Ընկերներ, առաջին հերթին պետք ե ա-  
սեմ, վոր ի՞նչպես մարդիկ առանց հացի ու կե-  
րակրի և այն՝ կուշտ փորով չեն կարող լավ գործ  
տեսնել, փող աշխատել, տուն կառավարել, այն-  
պես ել ձեր լծկան տավարը, յեթե կուշտ չու-  
տի, չի կարող վոչ գութան քաշել, վոչ ել

բեռ տանել. այդպես ել կովը ձեղ կաթ չի տար,  
չ'թե սոված թողնեք. չե՞ վոր նա յել պետք ե  
ապրի, և դեռ այդ բավական չե, իր հորթին ել  
կերակրի, ինչպես վոր մայրերն իրենց մանուկ-  
ներին են կերակրում, և դեռ մեղ ել կաթ տա,  
վոր մածուն ու յուղ պատրաստենք, թե աղը տա,  
վոր նրանով հողը պարարտացնենք։ Ուրեմն  
առաջին հերթին կերի հարցն ե։

### Առուցեղից կեր վերցնենք

Գյուղացու տնտեսության բարելավման ա-  
մենից շատ արգելքը առաջանում ե կերի պա-  
կասությունից։ Այդ պակասությունը արգելք ե  
դառնում ինչպես դաշտավարության, այնպես ել  
տավարապահության զարգացմանը։ Որինակով  
հասկացնենք. գյուղացիք գարնանացանի համար  
հողը առաջուց չեն հերկում, վորովհետև ցան-  
քատեղի վրա արածացնում են տավարը, իսկ  
առաջ հերկելուց տավարի կեր չեն ունենում։  
Ինչ պետք ե անեն։ Ահա թե ինչ։

Պետք ե խոտաբույեր ցանել, արոտահե-  
ղերը լավացնել, արմատապտուղներ ցանել և  
վերջապես ձեռք բերել գյուղի համար հարկա-  
վոր քանակությամբ բուսպ, թեփի, վոր ուժեղ  
կեր են տավարի համար։

Խոտաբույերի ցաներ հացարույսերից ավե-

Ա ոգուտ կտա, մանավանդ ջրարրի դաշտավայ-  
րերում, յերբ առվուլտ, յերեքնուկ, կորնզան,  
վիկա և այլ խոտաբույսեր են ցանում և ցան-  
քի մի մասը պահում են սերմի համար։ Բացի  
այդ խոտաբույսերը հողը պարարտացնում են,  
բերքի քանակը շատացնում և թե տվելի գոմաղբ  
տալիս տավարին բավարար կեր տալուց։

Մարգագետինների վրա մեզանում շատ  
քիչ են ուշադրություն դարձնում։ տավա-  
րը, վոչխարը բաց են թողնում գարնանը,  
հենց վոր խոտը մի փոքր ծլած բարձրացած ե  
լինում, նրանք վոտնատակ են տալիս այդ խո-  
տերը. տեղի խոնավության պատճառով խոտը  
հողին պինդ կպչելուց մեծ մասը փչանում ե,  
այնինչ ուրիշ յերկրներում թե տավարի և թե  
վոչխարի համար արոտատեղը մասերի յեն բա-  
ժանում, յերբ խոտը արդեն բարձրացել ե, մի-  
քանի որ մի մասի վրա արածացնում, հետո  
հետզհետե մյուս մասերի վրա. մեծատավարին  
կապոտում են գետնի մեջ խրած ձողերից, իսկ  
վոչխարների համար շարժական ցանկապատեր  
են շինուած։ Մի մասում արածացնելուց հետո  
այլևս չեն թողնում, վոր այնտեղ տավար կամ  
վոչխար մտնի, մինչեւ վոր նորից խոտը լավ չի  
բարձրանում,

Մեզանում կան շատ ճահճալին տեղեր. պետք

Ե դրանք չորացնել և արստատեղերի, թանգարածեք բույսերի մշակության վերածել: Ճահճային տեղեր չորացնելը մեկ մարդի բան չի. այդտեղ գյուղի համայնքը, կոռալերատիվ ընկերությունները, Հողժողկոմատը և այլ հիմնարկությունները ևս կաջակցեն: Այդպիսի տեղերը չորացնելուց 2—3 տարուց թե դրված ծախքերը կծածկվեն, թե փոխանակ մի դեսիատին տեղից 100—150 փութ չոր խոր ստանալու, մինչև 300 փութ կստացվի:

### Խ. Ե ՊԵՐ ԽԵ ԽԱՊՈՒՄ ԱՐՄԱՅԱՊԵԿՈՒՂՑԵՐԸ

Ամենից եժան կերը արմատապտուղներն են: Մի դեսիատին տեղից կարելի յե կերի բազուկ ստանալ միջին հաշվով մինչև 2000 փութ: Մի դեսիատին տեղի վրա ծախք կպնա հերկելու, սերմելու, քաղհանի, ջրելու և հավաքելու՝ 100 ռուբլուց վոչ ավել. այնպես վոր զյուղացուն մի փութը կնստի 5 կոպեկ: Կերի բազուկի հինգ փութը փոխարինում ե մի փութ չոր յերեքնուկի կամ առվուլտի, բայց կարելի՞ յե արդիոք 25 կոպեկով մի փութ չոր առվուլտ կամ յերեքնուկ գնել:

Մի դեսիատին կերի բազուկի բերքը հավասար ե 400 փութ չոր յերեքնուկի:

Արմատապտուղների մշակության շնորհի մեջ, վոր դանիացիք ձեռքի տակ 5 դեսիատին վա-

ըելու հող ունենալիս, և այն առանց մարդագետնի խօստաբուլսերի և արոտատեղի, կարողանում են չորս կով պահել և ամեն մեկից տարեկան 250—300 վեդրո և ավելի կաթ վերցնել:

Յերկու հարյուր հիսուն քառակուսի սաժեն տեղից կարելի յե այնքան արժատապտուղներ՝ բազուկ, շաղգամ, գաղար ստանալ, վոր բավական կլինի աշունքից մինչև գարունը մի կով կերակրելու:

Բազուկը ամեն տեղ կարելի յե ցանել, իսկ դազարը չորային տեղերում անգամ լավ բերք ե տալիս:

Բազուկը, դազարը, շաղգամը կարելի յե հում տալ, բայց մանրած կամ քիչ խաշած և այն՝ դարմանի հետ. կարտոֆիլը պետք ե կտրատած տալ, վոր բկին չմնա. ծլած կարտոֆիլը կարելի յե ուտացնել միայն յեփ տված. բորբոսնած, վչացած կեր չպիտի տալ:

Ուժեղ կերի մասին: Կերը պես և առ կենդանի բազի համեմատ

Ուժեղ կեր և և գյուղացուն ավելի ձեռընտուբամբակի, ալրի թեփը, արևածաղկի, քնջիթի, կտավատի, վուշի և բամբակի սերմի քուսպը: Թե կովին և թե մյուս անասուններին պետք ե կերակրել իրենց կենդանի քաշի համեմատ. ա-

մեն Յ փութ կենդանի քաշ ունեցող անասունին պետք ե որական մի միավոր կեր տալ, 6 փութ քաշ ունեցողին՝ յերկու միավոր, 9 փ. ունեցողին՝ Յ միավոր:

Մի միավոր կեր և՝ 1 ֆունտ ալբեռնը՝ գարու, վարսակի հայլն

»	1	»	թիփը
»	2½	»	կտավատի, քնջիթի, բամբակի քուսոյը
»	3	»	մարզագետնի չոր խոտը
»	4	»	ճահճային տեղերի շոր խոտը
»	2—2½	»	չոր առվույտը
»	4—5	»	գարնանացան դարմանը
»	5—6	»	աշնանացան
»	12	»	կանաչ խոտը
»	8	»	» առվույտը
»	15	»	բաղկաթերը
»	13	»	կաղամբաթերը
»	8	»	բազուկը
»	8	»	գաղարը
»	6	»	կարտոֆիլը:

Այդ կերերը չպետք ե առանձին-առանձին տալ, այլ խառնուրդ անելով, թաց կերը չորի հետ խառնած և միշտ հաշիվը պահելով, այն և՝ թե ինչքան այս ու այն միավորները պետք ե իրար խառնել՝ կենդանի քաշը աչքի առաջ ունեցած:

Բացի կենդանի քաշը, պետք ե աչքի առաջ ունենալ և կովի կաթնատվությունը կամ լծկանի աշխատանքը. Կովը շատ կաթ կտա, յերբ կերակրում են ուժեղ, աննդարար նյութերով, այն

ե՝ գարու ալյուրով, թեփով, քուսպով, բամբակի հունդով։ Ամեն 3 ֆունտ կաթ ստանտու համար պետք ե 1 ֆունտ ուժեղ կեր տալ, 15 ֆունտին՝ որական 5 ֆունտ։ Ուժեղ կերը լավ ե տալ խոտի փշրանքի և կամ դարձանի հետ։ Հորթը ծնելուց հետո առաջին ամսին նույնպես կերի քանակը պետք է ավելացներ, վոր թե իրեն պահի, թե հորթուկին և թե կովամիրոջը կաթ տա։ Զիերին ու մածատավարին կարելի յետալ որական 5—8 ֆ. քուսպ, վոչխարներին՝ վոչ ավելի, քան 2 ֆ.։

Ուրիս ի՞նչ խնամք ե պես կովին ու տավարին

Նախ պետք ե գոմանոցը մաքուր պահել, կովի տակը ձմեռը ծղոտ փռել, ախոռը ամեն որ մաքրել տականքներից, կովի մարմնին կպած կեղտերը մաքրել, կուծքը լվանալ կթելիս ծծերը մատներով չճգՃգել, այլ բռունցքի միջոցով։

Գոմը պետք ե լրւսամուտ, ողանցք ունենա. պետք ե թողնել այն վատ սովորությունը, վոր ամբողջ ձմեռը մութ գոմի մեջ են պահում տավարը, մինչև անգամ աղբը գոմի մի անկյունում հավաքած պահում են, վոր տաքություն տա։ Ձմեռը պաղ ջուր չպիտի տալ կամ տանել սառուց կապած առուների ջրերից խմացնել. Հուրը լավ ե տանը պահել տակառում և նրանից որական 2 անգամ խմացնել։

Կովի բեղմնավորման ժամանակը

Փորձերը ցույց են տալիս, վոր կովը յեթե  
բեղմնավորվել ե վաղ գարնանը, նա ծնում է  
մինչև սաստիկ ցրտերի սկսվելը. այդ դեպքում  
նա ավելի հեշտ է ծնում, քիչ հիվանդանում,  
ավելի լավ սնվում, քանի վոր աշնան կերն ա-  
վելի լավ ե գարնան կերից, հորթն ել կուշտ կաթ  
ե ուսում:

Բեղմնավորելու համար չպետք է կովին ա-  
մեն մի պատահական ցուլի տակ դցել, այլ ոգ-  
տըվել ազնվացեղ ցուլերից, վոր ալժմ կան թե  
խորհրդային տնտեսություններում և թե ա-  
նասնապահական կայաններում:

Կովը ծնելուց 25—28 որ հետո սկսում է  
բեր գալ. չպետք ե այդ աչքաթող անել, հակա-  
ռակ դեպքում ծնելը մի ամիս կուշտանա. յեթե  
այդ ժամանակը ցուլի տակ չգցվի, կովը 3 շա-  
բաթից հետո նորից կսկսի բեր գալ:

Կովը յեթե փետրվարին է ծնել, հարկավոր  
ե մարտին բեղմնավորել, վոր ծնունդը լինի դեկ-  
տեմբերին, իսկ յեթե դեկտեմբերին է ծնել,  
պիտի բեղմնավորել հունվարին՝ հոկտեմբերին  
ծնելու համար:


Յեթե առաջին անգամ յերինջն են բեղմնա-  
վորում, նա պետք ե առնվազն յերկու տարե-  
կան լինի:

Կովերը բեղմնավորելու համար չպետք ե  
բաց թողնել նախըի մեջ, այլ տանը գոմո. մ  
կամ բակում և այն՝ տեղական աղնվացեղ ցուլի  
ոգնությամբ:


Մի վերջին խոսք, ընկերներ. յեթե ուզում  
եք մեղանում անամնաբուծությունը զարգանա,  
ձեր տնտեսությունը շահեկան լինի, պետք ե  
աշխատեք միահամուռ ուժերով գործի կպչել,  
կաթնատնտեսական արտելներ, կոռապերատիվ  
ընկերություններ կազ նել, ձեր մթերքը, կաթ  
լինի թե պանիր կամ յուղ, վաշխառու-առևտրա-  
կաններին չծախսել։ Միայն կաթնատնտեսական  
արտելը շահավետ կդարձնի գյուղացու տնտե-  
սությունը. այդ աչքի առաջ առաջ ունեցեք:  
Թե ինչպես պետք ե արտելներ կազմակերպեք,  
անամնատերերի միություն կազմեք, զրա համար  
պետք ե զիմեք մի մասնագետի, վոր ցույց տա,  
թե ձեր կովերից, անասուններից վորն ավելի  
շահեկան ե, վորի վրա ուշը պիտի դարձնեք և  
ավելորդները ծախու հանեք։ Ընկերներ, ձեր  
միջից կամ դրսից անասնապահության, կաթնա-  
տնտեսության գործին հմուտ մի վարիչ հրավի-  
րեցեք, հետևեցեք նրա խորհուրդներին և կտես-  
նեք, վոր համայնական ուժերով գործ տեսնելն  
ավելի շահավետ ե. ավելի ձեռնառ յե, քան  
անհատական կերպով գործ տեսնելը։

Վերջացնելով իմ խոսքը՝ կրկնում եմ. աշխատեցեք խոտաբույսեր, արմատապտուղներ շատ ցանել, խոտատեղերը անասուններին վոտնատակ չտալ, գոմերը տաք պահել, լույս և ոդանցք ունենալ, անասուններին իրենց կենդանիքաշին համեմատ կերակրել, աշխատել, վոր կովի ծնունդը աշնանը ընկնի և, վոր զլիսավորն ե, արտել կազմել ու ընկերական հիմունքներով տանել դործը և ոգուտ քաղել մասնագետների ցուցմունքներից, խորհուրդներից և անսանապահության վերաբերյալ գրքերից:


A  $\frac{\pi}{40231}$



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220040231



(04.)

ԳԻՒԸ 5 ԿՐՊ. Ա. (1 մամուլ)

A 40231  
II



---

Спор бабушки Нанагюл и коровы  
и  
беседа агронома об уходе за коровой

---

Госиздат ССР Армении  
Эривань - 1929